Հավելված N 2
2023 թվականի հունվարի 22-ին կնքված
«1032-11003/24-Լ,Ց » պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N_4_

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեցների ցերեկային խնամքի կենտրոն Տաշիրում |
| Դրամաշնորհի N | *«1032-11003/24-Լ,Ց »* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | „Հայկական Կարիտաս" ԲՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01-31.12.2024 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10-29.12.2024 |
| Ներկայացման օր | 23.12.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | Տիգրանուհի Տարախչյան, Ծրագրի ղեկավար |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

**Ծրագրի շրջանակներում նախատեսված է տարեցներին տրամադրել հետևյալ ծառայությունները՝**

- Ամենօրյա ցերեկային խնամք
- Շահառուների կարիքի գնահատում, վերագնահատում, ըստ կարիքի գնահատման՝ անհատական սոցիալական ծրագրերի կազմում և համապատասխան գրանցումների կատարում,
- Ուղղորդում, ուղեկցում և համապատասխան աջակցության ցուցաբերում,
- Օրական մեկանգամյա սննդի տրամադրում (շաբաթական 5 օր),
- Բուժքույրական խնամքի, խորհրդատվության և աջակցության տրամադրում, ներառյալ դեղորայք՝ ըստ կարիքի,
- Շահառուների հիգիենիկ խնամքի կազմակերպում, որը ներառում է լոգանքի, վարսահարդարման, լվացքի ծառայությունների մատուցում,

- Շահառուների նախասիրությունների բացահայտում, խմբակների ձևավորում, զբաղվածության և ժամանցի կազմակերպում,
- Միջոցառումների կազմակերպում /էքսկուրսիաներ, տոների և հիշարժան օրերի նշում/:

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ հիմնական գործողությունները՝

- Կենտրոնի սոցիալական աշխատողի կողմից կատարվել է ծրագրում ընդգրկված նոր շահառուների կարիքի գնահատում, անհատական սոցիալական ծրագրերի կազմում և վերանայում:
- Կազմակերպվել և իրականացվել է 20 տարեցի ամենօրյա տրանսպորտով տնից կենտրոն և հակառակ ուղղությամբ տեղափոխման աշխատանքներ:
- Կատարվել է այցելություն հիվանդության պատճառով բացակայող տարեցներին:
- Տարեցների կայուն առողջական վիճակը պահպանվել է բուժքրոջ ամենօրյա կանոնավոր խնամքի և բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների տրամադրման միջոցով: Կատարվել է վիրակապություն երկու շահառուի: Մի խումբ շահառուներ նաև օգտվել են մերսման սարքերից: Անհրաժեշտության դեպքում ուղղորդվել են բուժհաստատություն:
- Կազմակերպվել են հիգիենայի պահպանման օրեր: Կամավորի օգնությամբ հարդարվել են 22 տարեցների մազեր:
- Կազմակերպվել է լվացքատան գործունեություն՝ լվացվել է տարեցների հագուստը, անկողնային պարագաները և արդուկված վերադարձվել է շահառուներին:
- Տրամադրվել է ամենօրյա տաք սնունդ կենտրոն հաճախող բոլոր շահառուներին՝ ըստ նախապես մշակված սննդակարգի:
- Իրականացվել են ասմունքի, այգեգործության, ձյուղագործության և կարի խմբակների աշխատանքները՝ ըստ կազմված ժամանակացույցի:
    - Ասմունքի խմբակի խմբավարի կողմից պատրաստված նյութերով, խմբակի տարեցների մասնակցությամբ, ժամանակացույցով հատկացրած ժամերին իրականացվել են միջոցառումներ:
    - Կարի խմբակի 4 տատիկների ուժերով հաշվետու ժամանակահատվածում վերանորոգվել են պապիկների և տատիկների բերած հագուստները:
    - Ձյուղագործության խմբակի 3 տատիկներ խմբավարի հետ համացանցից ընտրել են գործվածքի տարբեր նախշեր և գործել են 1 հատ մանկական բլուզ, 1 հատ գլխարկ, 2 զույգ գուլպա:
    - Այգեգործության խմբակի անդամները բերքահավաքից հետո շարունակել են բանջարանոցի տարածքի մաքրման աշխատանքները: Մասնակցել են 10

շահառու:

- Իրականացվել են հետևյալ միջոցառումները՝
- Հոկտեմբերի 1-ին կենտրոնում անցկացվել է տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառում, որին ակտիվ մասնակցություն են ունեցել 17 շահառու:
- Նոյեմբերի 5-ին կենտրոնում անցկացվել է «Ոսկե աշուն» միջոցառումը, որին ակտիվ մասնակցություն են ունեցել 14 շահառու:
- Դեկտեմբերի 26-ին կենտրոնում անցկացվել է «Սուրբ ծնունդ»-ի բեմականացում, որին ակտիվ մասնակցություն են ունեցել 10 շահառու:

**Տարեցները սոցիալականացված են և ներգրավված են տարբեր սոցիալական և ժամանցային միջոցառումների մեջ: Նրանք շրջապատված են խնամքով և ուշադրությամբ, նրանց մեկուսացման և մենակության զգացումը հասցվել է նվազագույն մակարդակի:**

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Առկա են միջոցառումների և ընթացիկ աշխատանքների նկարներ:

Եռամսյակային հաշվետվությանը կից ներկայացնում ենք հաջողության պատմություն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ և խնդիրներ չեն առաջացել:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Ծրագրի ավարտվում է դեկտեմբերի 31-ին:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ծրագրի շահառուներին տրամադրվել է պարենային ապրանքների փաթեթ:

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան ______________________

«23» դեկտեմբեր 2024 թ.

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն |
| Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ______________________ (ստորագրություն) | ______________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |